ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-9/36-2

ք. Երևան 22 -ը հոկտեմբերի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»**, մի կողմից, և **«Կուրացիո» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Չեքեզյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***7,959,800 (յոթ միլիոն ինը հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված

---

[21] Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

չափերով և եռամսյակի: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է

---

[21] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կուրացիո» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Սարյան 16/30
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/h 2051222021581001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02585487
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	[illegible]ՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/36-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի				
Հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիր	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը
2.	Տաքացնող վերմակ մարմնի վերին հատվածի համար	Նախատեսված են մարմնի վերին հատվածի կոնվեկցիոն համակարգերով տաքացման համար: Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound նյութից, արտաքինից պատված չվառվող, կենսաբանորեն իներտ, անջրաթափանց նյութից, ունի պարանոցային կտրվածք:	LEVEL 1 REF:SWU 2003	Smiths Medical
3.	Տաքացնող վերմակ մարմնի ստորին հատվածի համար	Նախատեսված է մարմնի ստորին հատվածի կոնվեկցիոն համակարգերով տաքացման համար: Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound նյութից, արտաքինից պատված չվառվող, կենսաբանորեն իներտ, անջրաթափանց նյութից	LEVEL 1 REF:SWU 2004	Smiths Medical
4.	Տաքացնող վերմակ ամբողջ մարմնի համար	Նախատեսված է ամբողջ մարմնի կոնվեկցիոն համակարգերով տաքացման համար: Պատրաստված է երկշերտ սինթետիկ Spunbound նյութից, արտաքինից պապված չվառվող, կենսաբանորեն իներտ, անջրաթափանց նյութից, ունի պարանոցային կտրվածք:	LEVEL 1 REF:SWU 2001	Smiths Medical
5.	Հակամիկրոբային վիրակապ	Հակամիկրոբային վիրակապ կալցիում ալգինատի և արծաթի պարունակությամբ 10x10սմ, անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆեկտիվ ազդեցություն:	Suprasorb A+Ag REF:20571	Lohmann &Rauscher
6.	Վիրակապ կոմպրեսս	Վիրակապ կոմպրեսս աբսորբենտ ակտիվացված ածուխի և արծաթի պարունակությամբ, 10x10սմ: անհատական, ստերիլ փաթեթավորում: Վիրակապի 5-7օր էֆեկտիվ ազդեցություն:	Vliwaktiv Ag REF:20701	Lohmann &Rauscher
8.	Կաթետերի ֆիքսման սպեղանի	Կաթետերի ֆիքսման սպեղանի 9x6սմ, խաչաձև կտրվածքով, կենտրոնական ներծծող բարձիկով: Պատրաստված է պոլիէսթերից, ներքին պոլիակրիլատային շերտով, հիպոալերգեն է, "շնչող", թրջվելուց չպոկվող: Անհատական ստերիլ փաթեթավորում:	Curafix I.V. REF:30050	Lohmann &Rauscher
19.	Վերքերի դրենավորման զսպանակային տարա	500մլ զսպանականման տարա, որի մեջ կա մետաղական զսպանակ վերքից անընդհատ ասպիրացնելու համար: Ունի միացնող խողովակ սեղմակով և կոնաձև ծայրով, միակողմանի փական, վակուումի փական, ապահովի մինչև 100սմ ջրի սյան վակուում:	REDAX REF:20200	REDAX
21.	Ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, N 7,5	Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, նախատեսված օռո և նազոտրախեալ ինտուբացիայի համար, մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ, Փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Չափսը 7.5	PORTEX REF:100/199/075	Smiths medical
22.	Ներշնչափողային փող օռո-նազոտրախեալ, N8,0	Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, ցածր ճնշման մանժետով: Պատրաստված է թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից, նախատեսված օռո և նազոտրախեալ ինտուբացիայի համար, մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, փողի կտրվածքը կորացված, Մերֆիի անցքի առկայությամբ, փողի երկայնական ռենտգեն պոզիտիվ գծի առկայությամբ: Չափսը 8.0	PORTEX REF:100/199/080	Smiths medical
23.	Զտիչ բակտերիո-վիրուսային շնչական կոնտուրի համար	Բակտերիովիրուսային զտիչ շնչառական կոնտուրի համար: Պատրաստված է թափանցիկ պլաստմասսայից, միացման չափսը 15/15-22, զտիչը բակտերիո-վիրուսային, ֆիլտրացիայի աստիճանը 99.9% 24ժամ ԹԱՇ-ի համար, քաշը 20գ, հոսքի դիմադրությունը 3.0սմ H2O (60լ/րոպեի դեպքում), մեռյալ տարածությունը 32 մլ: Միանվագ օգտագործման, ստերիլ է, ապիրոգեն, ոչ տոքսիկ:	PORTEX REF:002862	Smiths medical
24.	Շնչական կոնտուր մեծահասակի	Շնչական կոնտուր մեծահասակի, անեսթեզիայի համար 60", բ/վ զտիչով: Պատրաստված է թափանցիկ պլաստմասսայից, երկարությունը 152սմ, միացման չափսը 15/22, ճկուն է, սակայն չծալվող, ունի բիֆուրկացիոն կոննեկտորով միացած երկու խողովակ, անկյունային կոննեկտոր, բակտերիո վիրուսային զտիչ, 3լ պահեստային պարկ:	PORTEX REF:225-3718-800	Smiths medical
26.	Շնչական կոնտուր մեծահասակի	Շնչական կոնտուր մեծահասակի, անեսթեզիայի համար 72": Պատրաստված է թափանցիկ պլաստմասսայից, երկարությունը 183սմ, միացման չափսը 15/22, ճկուն է, սակայն չծալվող, ունի բիֆուրկացիոն կոննեկտորով միացած երկու խողովակ, անկյունային կոննեկտոր,	PORTEX REF:225-3724-800	Smiths medical

28.	Փակ ասպիրացիոն համակարգ էնդոտրախեալ փողի համար	Փակ ասպիրացիոն համակարգը նախատեսված է առանց շնչական կոնտուրի հերմետիկությունը խախտելու առնվազն 72 ժամ շնչական համակարգի սանացիայի իրականցնելու համար: Ունի իրրիգացիայի համար լրացուցիչ ուղի: Ունի ասպիրացիոն կատետրի թեքված ծայր: Ունի փական չնախատեսված ասպիրացիայի կանխման համար: Նախատեսված է էնդոտրախեալ փողի համար:	PORTEX REF:Z250-14	Smiths medical
29.	Տրախեոստոմիայի հավաքածու	Տրախեոստոմիայի հավաքածու Հովարդ-Քելլի սեղմակով, նախատեսված է անհետաձգելի տրախեոստոմիայի համար, պարունակում է անհրաժեշտ բոլոր պարագաները (նշտար, վերքլայնիչ, ուղղորդիչ, երկար ուղղորդիչ, խողովակի ներդիր (իններ)): Չափսը 9.0	PORTEX REF:100/891/090	Smiths medical
38.	Օքսիգենոթերապիայի դիմակ մեծահասակի	Օքսիգենոթերապիայի դիմակ մեծահասակի թթվածնային խողովակով: Պատրաստված է փափուկ վինիլից, ունի ամրացնելու երիզ, քթին ֆիքսելու մետաղական սեղմակ, թթվածնային խողովակի երկարությունը 213 սմ:	PORTEX REF:001121	Smiths medical
40.	Տոնոմետրի մանժետ չափահասի /միջին/	Զարկերակային ճնշման ավտոմատ չափիչ սարքի մանժետ մեկ ճյուղով, չափահասի	Timesco REF:D06.221	Timesco Healthcare
41.	Վիրակապ 10x8	Ստերիլ ինքնակպչուն վիրակապ պատրաստված է պոլիէսթերից, ներքին պոլիակրիլատային կպչուն եզրով, կենտրոնական ներծծող բարձիկով, հիպոալերգեն է, "շնչող": անհատական ստերիլ փաթեթավորում: Չափսը 10x8սմ, բարձիկը 4x6սմ:	Curapor REF:32913	Lohmann & Rauscher
42.	Վիրակապ 10x20	Ստերիլ ինքնակպչուն վիրակապ պատրաստված է պոլիէսթերից, ներքին պոլիակրիլատային կպչուն եզրով, կենտրոնական ներծծող բարձիկով, հիպոալերգեն է, "շնչող": անհատական, ստերիլ փաթեթավորում: Չափսը 10x20սմ, բարձիկը 5x16սմ:	Curapor REF:32915	Lohmann & Rauscher
43.	Վիրակապ 10x25	Ստերիլ ինքնակպչուն վիրակապ պատրաստված է պոլիէսթերից, ներքին պոլիակրիլատային կպչուն եզրով, կենտրոնական ներծծող բարձիկով, հիպոալերգեն է, "շնչող": անհատական, ստերիլ փաթեթավորում: Չափսը 10x25սմ, բարձիկը 5x20սմ:	Curapor REF:32916	Lohmann & Rauscher
44.	Վիրակապ 10x30	Ստերիլ ինքնակպչուն վիրակապ պատրաստված է պոլիէսթերից, ներքին պոլիակրիլատային կպչուն եզրով, կենտրոնական ներծծող բարձիկով, հիպոալերգեն է, "շնչող": անհատական, ստերիլ փաթեթավորում: Չափսը 10x30սմ, բարձիկը 5x25սմ:	Curapor REF:32917	Lohmann & Rauscher
45.	Վիրակապ ներծծող, 10x20	Վիրակապ ներծծող, չափսերը՝ 10x20 ստերիլ, բազմաշերտ ուժեղ ներծծող հատկությամբ վիրակապ է, հատուկ փափկության շնորհիվ չի գրգռում մաշկը, ներքին ցելյուլոզային շերտի շնորհիվ վիրակապը ներծծած արտադրությունը պահում է կենտրոնում՝ բացառելով վիրակապի արտաքին մակերեսից արտադրանքի արտազատմանը: վիրակապը բաղկացած է պոլիպրոպիլենից և ցելյուլոզայից: Շերտերի կազմը 1.Ոչ կտորային արտաքին շերտ, 2. Ցելյուլոզայի տարածված շերտ, 3.պոլիպրոպիլենային պաշտպանիչ շերտ, 4.Ցելյուլոզայի խրձերից ներծծող շերտ:	Vliwazell REF:30451	Lohmann & Rauscher

Ծանոթություն.

Ապրանքները պետք է ունենան.

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

2.Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP կամ այլ):

3.Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

5. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բժշկական բազա:

թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կուրացիո» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՉԵՐՔԵԶՅԱՆ

«ԿՈՒՐԱՑԻՈ» "КУРАЦИО" "CURATIO" 02585487

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը՝ 2021թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.11.2021թ.
2.	Տաքացնող վերմակ մարմնի վերին հատվածի համար	հատ	30	7200	216,000	30
3.	Տաքացնող վերմակ մարմնի ստորին հատվածի համար	հատ	30	7200	216,000	30
4.	Տաքացնող վերմակ ամբողջ մարմնի համար	հատ	10	7200	72,000	10
5.	Հակամիկրոբային վիրակապ	հատ	30	4400	132,000	30
6.	Վիրակապ կոմպրեսս	հատ	120	2640	316,800	120
8.	Կաթետերի ֆիքսման սպեղանի	հատ	1500	145	217,500	1500
19.	Վերքերի դրենավորման զսպանակային տարա	հատ	50	4000	200,000	50
21.	Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, N 7,5	հատ	400	950	380,000	400
22.	Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, N8,0	հատ	400	950	380,000	400
23.	Զտիչ բակտերիո-վիրուսային շնչական կոնտուրի համար	հատ	620	600	372,000	620
24.	Շնչական կոնտուր մեծահասակի	լրակազմ	350	3950	1,382,500	350
26.	Շնչական կոնտուր մեծահասակի	լրակազմ	400	4500	1,800,000	400
28.	Փակ ասպիրացիոն համակարգ էնդոտրախեալ փողի համար	լրակազմ	100	5500	550,000	100
29.	Տրախեոստոմիայի հավաքածու	լրակազմ	5	100000	500,000	5
38.	Օքսիգենոթերապիայի դիմակ մեծահասակի	հատ	150	700	105,000	150
40.	Տոնոմետրի մանժետ չափահասի /միջին/	հատ	5	5000	25,000	5
41.	Վիրակապ 10x8	հատ	500	140	70,000	500
42.	Վիրակապ 10x20	հատ	500	270	135,000	500
43.	Վիրակապ 10x25	հատ	500	300	150,000	500
44.	Վիրակապ 10x30	հատ	500	500	250,000	500
45.	վիրակապ ներծծող, 10x20	հատ	300	420	126,000	300
Ընդամներ					7,595,800	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կուրացիո» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՉԵՐՔԵԶՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/36-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի 2021թ. հատկացումների հաշվին, 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝
2.	**Անզգայացման գործիքներ**/Տաքացնող վերմակ մարմնի վերին հատվածի համար	33171100/2	216,000
3.	**Անզգայացման գործիքներ**/Տաքացնող վերմակ մարմնի ստորին հատվածի համար	33171100/3	216,000
4.	**Անզգայացման գործիքներ**/Տաքացնող վերմակ ամբողջ մարմնի համար	33171100/4	72,000
5.	**Վիրակապեր**/Հակամիկրոբային վիրակապ	33141110/15	132,000
6.	**Վիրակապեր**/Վիրակապ կոմպրեսս	33141110/18	316,800
8.	**Վիրակապեր**/Կաթետերի ֆիքսման սպեղանի	33141110/20	217,500
19.	**Վիրափողեր (դրենաժներ)**/Վերքերի դրենավորման զսպանակային տարա	33141182/17	200,000
21.	**Վիրափողեր (դրենաժներ)**/Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, N 7,5	33141182/20	380,000
22.	**Վիրափողեր (դրենաժներ)**/Ներշնչափողային փող օռո- նազոտրախեալ, N8,0	33141182/21	380,000
23.	**Վիրափողերի (դրենաժների) պարագաներ**/Հտիչ բակտերիո-վիրուսային շնչական կոնտուրի համար	33141184/1	372,000
24.	**Վիրափողեր (դրենաժներ) անհրաժեշտ պարագաներով**/Շնչական կոնտուր մեծահասակի	33141220/1	1,382,500
26.	**Անզգայացման գործիքներ բազմակոմպոնենտ**/Շնչական կոնտուր մեծահասակի	33141225/3	1,800,000
28.	**Անզգայացման գործիքներ բազմակոմպոնենտ**/Փակ ասպիրացիոն համակարգ էնդոտրախեալ փողի համար	33141225/5	550,000
29.	**Անզգայացման գործիքներ բազմակոմպոնենտ**/Տրախեոստոմիայի հավաքածու	33141225/8	500,000
38.	**Վերակենդանացման դիմակ**/Օքսիգենոթերապիայի դիմակ մեծահասակի	33171400/7	105,000
40.	**Բժշկական սարքավորումների պահեստամասեր**/Տոնոմետրի մանժետ չափահասի /միջին/	33111490/5	25,000
41.	**Վիրակապեր**/Վիրակապ 10x8	33141110/23	70,000
42.	**Վիրակապեր**/Վիրակապ 10x20	33141110/25	135,000
43.	**Վիրակապեր**/Վիրակապ 10x25	33141110/26	150,000
44.	**Վիրակապեր**/Վիրակապ 10x30	33141110/27	250,000
45.	**Վիրակապեր**/վիրակապ ներծծող, 10x20	33141110/30	126,000
Ընդամենը			**7,595,800**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կուրացիո» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՉԵՐՔԵԶՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-9/36-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-9/36-2 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն